

### Լալի Դալաքիշվիլի

*Բոլնիսիի լեզվի տան ուսուցիչ*

## ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԻՃԱԿԸ ԲՈԼՆԻՍԻԻ ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Վրաստանը բազմալեզու և բազմազգ երկիր է: Նրա բնակչության 13%-ը հենց ազգային փոքրամասնություններն են կազմում: 2002 թվականի մարդահամարի արդյունքների համաձայն, ամենաբազմաքանակ էթնիկական փոքրամասնությունը ադրբեջանցիներն են:

Վրաստանում էթնիկական փոքրամասնությունների թեմայով անցկացված մի շարք հետազոտություններում նշված է, որ փոքրամասնությունները, ընդհանրապես, իրենց ընկալում են որպես երկրորդ կարգի քաղաքացիներ: (օտարացած են) Ըստ նրանց, այն ժամանակ, երբ մնացած երկիրը զարգանում է, այն տարածաշրջաններում որոնք փոքրամասնություններով են բնակեցված, կյանքի պայմանները չեն բարելավվում: Թեպետ, իրականում Վրաստանի մյուս տարածաշրջաններում, որտեղ բնակիչների մեծ մասը վրացիներ են, վիճակը, առանձնապես տնտեսական և ենթակառուցվածքների

զարգացման տեսակետից, տարբեր չէ:

Փոքրամասնությունների օտարացումը մի քանի պատճառներից է բխում.

- մշակութային-էթնիկական կապերի բացակայություն,
- Ճանապարհների և հաղորդակցությունների անսարքություն,
- տեղեկատվական վակուում,
- տնտեսական դժվարության պատճառով

փոքրամասնությունների սերտ տնտեսական կապն ավելի հարևան պետությունների հետ է, քան Վրաստանի,

- պետական լեզվի չիմացություն:

Մեր կարծիքով հաղորդակցության և ինտեգրման ամենախանգարիչ գործոնը ընդհանուր լեզվի բացակայությունն է:

Այս ուղղությամբ անցյալ տարիներին բավականին մեծ աշխատանք է արվել:

Դեռ Շևարդնաձեի կառավարման շրջանում

Վրաստանում Լեզվի պետական պալատի նախաձեռնությամբ և ծխախոտ արտադրող ընկերություն «Ֆիլիպ Մորիսի» ֆինանսական աջակցությամբ Բոլնիսիի շրջանի հինգ գյուղում՝ Ջավշանիանիում, Քվեմո Բոլնիսիում, Նախիդուրիում, Ցուրտավիում և Հին Քվեշիում կազմակերպվեցին վրաց լեզվի դասընթացներ հանրային ծառայողների համար:

Էթնիկական

փոքրամասնությունների հիմնախնդիրներն առանձնապես հրատապ դարձան 2003 թվականից, նույն ժամանակվանից կրթության և գիտության նախարարությունը «Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան փոխհարաբերությունների կենտրոնի» հետ Վրաստանում գործող ԵԱՀԿ Ազգային փոքրամասնությունների գերագույն հանձնակատարի գրասենյակի ֆինանսական աջակցությամբ իրականացրեց նախագիծ «Վրացերենի, որպես երկրորդ լեզվի աջակցություն Քվեմո Քարթլիի ոչ վրացալեզու դպրոցներում»:

Ավելի ուշ շրջանում ակտիվացավ լեզվի ուսուցման դասընթացների գործունեությունը: 2006 թվականի սեպտեմբերից «Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան փոխհարաբերությունների կենտրոնի» և ԵԱՀԿ միասնական նախագծի՝ «Լեզվի դասընթացներ հանրային ծառայողների համար»,

շրջանակներում ստեղծվեց երեք խմբակ դպրոցի տնօրենների և հանրային ծառայողների համար:

2007 թվականից լեզվի ուսուցման գործի մեջ ընդգրկվեցին տեղական ոչ կառավարական կազմակերպությունները: Այս տեսակետից առանձնապես հարուստ փորձ ունի «Վրաստանի երիտասարդական կենտրոնների միությունը ԱԲՆՄ Բոլնիսիի մասնաճյուղը»: Նրան աջակցում էր ԵԱՀԿ-ն: Այստեղ 2007-2009 թվականներին տարբեր նախագծերի շրջանակներում 231 աշակերտ հնարավորություն ուներ բարձրացնել պետական լեզվի տիրապետման մակարդակը:

Հենց 2007 թվականին դիմորդներին նախապատրաստելու նպատակով Կրթության և գիտության նախարարությունը ֆինանսավորեց երկու խումբ: 2009 թվականին հանրային դպրոցներում, Մառնեուլիի Մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ և Ադրբեջանի Հանրապետության ֆինանսավորմամբ, ինը դպրոցում բացվեցին վրաց լեզվի դասընթացներ: Ցուրաքանչյուր խմբում ընդգրկված է 20 աշակերտ: Մանկավարժներն ընտրվել են դպրոցների տնօրենների կողմից, իսկ ընթացիկ տարում խմբերի քանակը հասել է տասներկուսի:

Այս նախագծերի իրականացումը անչափ բարձրացրեց ոչ վրացիների

մտտիվացիան՝ տարրական մակարդակով տիրապետել պետական լեզվին, թեպետ, ինդիորդ մնաց ինդիոր, քանի որ այսօրվա վիճակը, միևնույն է, բավարար չէ՝ էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների (ադրբեջանցիների) մեծ մասը չի տիրապետում վրացերենին:

Անհրաժեշտ է Բոլնիսիի ադրբեջանցի բնակիչների շրջանում բարձրացնել վրաց լեզվի իմացության որակը, ինչը պետք է իրականացվի նաև պետական լեզվի ուսուցման նկատմամբ նրանց հետաքրքրման աճի պայմաններում, քանի որ այլ դեպքում ոչ մեկը, որքան էլ բարձր արդյունավետությամբ նախագիծ լինի, չի կարող ապահովել ցանկալի արդյունքների նվաճում: Պետք է նախատեսել նաև այն, որ տվյալ վերլուծությունը նույնպիսի հաջողությամբ կարող է օգտագործվել նաև այլ փոքրամասնությունների նկատմամբ:

Ստեղծված իրավիճակի ուսումնասիրման և փորձի փոխանակման նախատեսմամբ կքննարկենք մի քանի այլընտրանք.

1. Երկլեզու ուսուցման մոդելի ներդրում:

2. Վրաց լեզվի ուսուցիչների փոխարինում բարձրորակ կադրերով:

3. Ազգային փոքրամասնություններին համազգային քննությունների

ժամանակ արտոնյալ պայմանների առաջարկում:

Այս այլընտրանքներն ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական հատկանիշներ:

Մեր երկրում բազմիցս են արվել վրաց լեզվի ուսուցիչների բարձրորակ կադրերով փոխարինելու փորձեր: Այս այլընտրանքի դրական կողմն այն է, որ որակյալ կադրը կարող է բարձրացնել ուսուցման որակը, բարձրացնել աշակերտների հետաքրքրությունը, սակայն պետք է նկատի ունենալ այն, որ տվյալ այլընտրանքը չի բնութագրվում համալիրությամբ և չի կարող ապահովել հիմնախնդրի սիստեմային լուծում: Այլընտրանքի արդյունքների կանխատեսման ժամանակ, կարևոր է նախատեսել նաև նրա թերի կողմերը: Մասնավորապես, մեծ ծախսերը՝ մանկավարժների վարձատրության և նրանց համար տրամադրված լրացուցիչ ֆինանսների տեսքով, մեկանգամյա և ոչ սիստեմավորված բնույթը, անհրաժեշտ կադրերի սակավությունը և գործողությունների սահմանափակ շրջանակը, կադրերի պատասխանատվության ցածր մակարդակը, որն անհնար է հաղթահարել թեկուզ բարձր վարձատրությամբ, վերաբերմունքը, որի համաձայն, միայն կադրերը չեն կարող վճռել հիմնախնդիրը,

Ազգային փոքրամասնություններին

համազգային քննությունների ժամանակ արտոնյալ պայմանների առաջարկում՝ ընթացիկ տարում էթնիկական փոքրամասնությունների համար սահմանվում են համազգային քննություններին մասնակցելու արտոնյալ պայմաններ: Այսպիսի որոշումը հնարավոր է բարձրացնի նրանց հետաքրքրությունը համազգային քննություններին մասնակցելու տեսակետից և ավելի շատ մարդկանց մոտ առաջացնի քննություններին մասնակցելու ցանկություն, թեպետ, այլընտրանքի բացասական կողմն այն է, որ այն չի կարող օգնել էթնիկական փոքրամասնություններին անհրաժեշտ մակարդակով սովորել պետական լեզուն: Համապատասխանաբար, նրա պատճառով, որ չեն գիտենա պետական լեզուն, արհեստավարժության մակարդակով ևս չեն կարողանա մրցակցել դոմինանտ բնակչության հետ:

Երկլեզու կրթության մոդելի ներդրումը էթնիկական ադրբեջանցիներին հնարավորություն կտա հենց տարրական դասարաններից տիրապետել մայրենի լեզվին, պահպանել իր մայրենի լեզուն և նաև ծանոթանալ դոմինանտ ազգի մշակույթին:

Այս մոդելի հզոր կողմն այն է, որ նրա իրականացման դեպքում էթնիկական

փոքրամասնությունները դպրոցական մակարդակին զուգահեռ կկարողանան սովորել պետական լեզուն այնպիսի մակարդակով, որ նրանց համար համազգային քննություն հանձնելը խնդրի չի վերածվի այլևս: Լեզվի իմացությունը նրանց կնպաստի ընդգրկվել պետության կառուցման մեջ և ազատվել օտարացման զգացումից: Արդյունքում կստանանք տեղական կադրեր, որոնք իրենց համայնքում կապահովեն պետական լեզվի տիրապետումը (նկատի ունենք լեզվական միջավայրի ստեղծումը), կտնտեսվեն գումարներ, որոնք կառանձնացվեն այն մանկավարժների համար, որոնք, որպես կամավոր, գնում են ադրբեջանական գյուղեր, սակայն այս մոդելի իրականացումը երկարաձգվում է ժամանակի մեջ: Պետք է նկատի ունենալ նաև ոչ համապատասխանաբար պատրաստված ուսուցչի կողմից սպասվելիք ծրագրային թերացումները: Տվյալ այլընտրանքի իրականացումը կառաջացնի նաև ծախսերի աճ, քանի որ, եթե մինչև օրս տարրական դասարաններում մեկ ուսուցիչ էր աշխատում, օրակարգի մեջ կդրվի միաժամանակ երկու ուսուցչի աշխատանքը: Հնարավոր է դեռահասը դժվարանա միաժամանակ սովորել երկու լեզու (լավագույն դեպքում հնարավոր է նաև մեկ ուսուցիչը ստանձնի երկու լեզվով դասի վարում, թեպետ փոքր

է սրա հավանականությունը էթնիկական փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում): Տվյալ մոդելի դրական փորձ պետք է համարվի միջազգային փորձի գոյությունը, առաջին քայլերը, որ արվել է մեր երկրում երկլեզու կրթության հաստատման համար:

Մեր կողմից ներկայացված հիմնախնդիրների վճռման հետ կապված գոյություն ունեցած այլընտրանքների թվում աստիճանավորման սահմանման համար մենք կիրառեցինք տարբեր չափանիշներ, որոնք հնարավորություն տվեցին ներկայացված հիմնախնդրի վճռման համար ընտրել նպատակին ամենից մոտ գտնվող այլընտրանքը: Ներկայացված հիմնախնդիրների վճռման համար այս չափանիշներով համեմատեցինք և վերլուծեցինք ներկայացված քաղաքականությունը:

Այս հետազոտման համար մենք օգտագործեցինք հետևյալ չափանիշները:

- Էթնիկական փոքրամասնությունների համար պետական լեզվի ուսուցման մոտիվացիայի բարձրացման աստիճանը:
- Այլընտրանքի իրականացման համար անհրաժեշտ ժամանակը:
- Այլընտրանքի արժեքը:
- Հասարակության կարծիքը:

- Էթնիկական փոքրամասնությունների համար զբաղվածության ցուցանիշի աճի հնարավորությունը:

- Այլընտրանքի շրաջանակներում նախատեսված միջոցառումների գործողության տարածքը:

- Տեղական համայնքի բավարարման աստիճանը:

- Քաղաքական մշակույթի աճի ցուցանիշը:

Այլընտրանքների միջև ընտրություն անելիս մենք սահմանեցինք յուրաքանչյուր այլընտրանքի հզոր և թույլ կողմերը, քննարկեցինք այս այլընտրանքների զարգացման լավագույն և ամենավատ իրավիճակները և համապատասխան փաստարկման հիման վրա արեցինք ընտրություն:

Ըստ մեզ, այն պետք է իրականացվի հետևյալ հաջորդականությամբ.

1. Ծրագրի

նախապատրաստական փուլ՝ ուսուցիչները, դպրոցը, վարչությունը և ծնողները պետք է ապահովված լինեն համապատասխան տեղեկատվությամբ ծրագրի և սպասվելիք արդյունքների մասին, որպեսզի ապահովվի համապատասխան վերաբերմունքը և նվազեցվեն բացասական տրամադրվածությունները:

2. Ուսուցիչների

վերապատրաստում երկլեզու կրթության համար, և նոր կադրերի ներգրավում:

3. Տարրական դասարանների ուսուցչի հավաստագրման տարբերվող համակարգի կազմում, որպեսզի հնարավոր դառնա բարեփոխման հաջող ներդրում:

4. Մանկավարժների վերապատրաստման համար լրացուցիչ վաուչերների հայթայթում և ֆինանսավորում:

5. Երկլեզու ուսուցման ներդրում տարրական դասարաններից և որպես ուսումնա-մեթոդական դասագիրք «Թավթավիի» օգտագործում:

Երկլեզու կրթության ուսուցման մոդելի ներդրման համար ցանկալի կլինի նաև.

- Ստեղծվի խորհրդովական մարմին:

- Գործընթացին ակտիվորեն ընդգրկվեն ծնողները:

- Աճի մանկավարժների հետաքրքրության աստիճանը:

- Էթնիկական ադրբեջանցիներով բնակեցված գյուղերում ստեղծվեն ամառային դպրոցներ՝ լեզվի ոչ պաշտոնական ուսուցման համար:

Առաջարկված մոդելի իրականացման դեպքում սպասելի կլինի արդյունքի տեսքով տեսնել, դպրոցն ավարտած երիտասարդ, որը կունենա բարձր մոտիվացիա՝ հանձնել բարձրագույն ուսումնական հաստատություն և մասնակցել համազգային քննություններին, նա իրեն կզգա որպես բազմամշակութային հասարակության անդամ, այլևս չի ունենա օտարացման զգացում, չէ որ կրթության գլխավոր նշանակումը հենց այդ է՝ նպաստել բոլոր աշակերտների մտավոր, սոցիալական և անհատական զարգացմանը և լիարժեք հասարակական ինտեգրմանը:

**Lali Dalakishvili**

Teacher of Bolnisi Language House

## **State language learning situation of Azerbaijani population in Bolnisi**

### **ABSTRACT**

The researches conducted on ethnic minority issues in Georgia is mentioned that they still perceive themselves to be alienated. The main obstacles to integration is the lack of the knowledge of state language. In terms of language learning comparison with previous years there were carried out a lot of works in Bolnisi region. The article presents the problems of Georgian, as a second language learning through bilingual education, outlets and recommendations.